ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Մարինա Ալեքսանդրի Մարգարյանի «Գործադիր իշխանության գործառման փոխակերպումը ՀՀ քաղաքական համակարգում» («Transformation of the Functioning of the Executive Power in the Political System of the Republic of Armenia») թեմայով՝ ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Միջազգային հարաբերությունների և արդի քաղաքական գիտության տեսական մոտեցումներում ժամանակակից աշխարհակարգը դիտարկվում է որպես անցումային և բարձր անորոշությամբ բնութագրվող փուլ, որին հատուկ են նվազ կանխատեսելիությամբ, սակայն բարձր ազդեցությամբ իրադարձությունները («black swan events»)[1]: Այս համատեքստում պետական կառավարման արդյունավետությունը վերածվում է ոչ միայն վարչական, այլև քաղաքական լեգիտիմության, ինստիտուցիոնալ կայունության և հանրային դիմակայունության ապահովման առանցքային նախապայմանի:

Աշխարհաքաղաքական բևեռացման, անվտանգության ճարտարապետության վերաձևման, գլոբալ կառավարման ավանդական մեխանիզմների թուլացման, ինչպես նաև էներգետիկ և տնտեսական փոխկախվածությունների վերադասավորման պայմաններում պետությունների ռազմավարական կառավարման տրամաբանությունն ու ինստիտուցիոնալ արձագանքման մեխանիզմները ենթարկվում են կառուցվածքային վերափոխումների: Այս գործընթացների պարագայում կառավարություններից ակնկալվում է ոչ միայն վարչարարական արդյունավետություն, այլև բարձր ճգնաժամային արձագանքման կարողություն, ինստիտուցիոնալ ճկունություն և պետական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահության պահպանում:

Միաժամանակ, տվյալահեն որոշումների կայացման գործընթացներում տվյալների թվայնացման, տեղեկատվության համադրման և վերլուծության նպատակով արհեստական բանականության (ԱԲ) կիրառմամբ գործարկվող թվային հարթակները էապես փոխակերպել են պետություն–հասարակություն փոխհարաբերությունների բնույթը: ԱԲ ալգորիթմների և կանխատեսման հիմքով վերլուծությունների կիրառումը կառավարություններին հնարավորություն է տալիս

[1] Beasley, Ryan K., Kai Oppermann, and Juliet Kaarbo. "(Re-)Setting the World Stage: Role Theory and Transitional Orders." *Global Studies Quarterly* 6, no. 1 (2026)

տվյալների համադրման միջոցով բացահայտել վարքագծային նոր օրինաչափություններ և փոխկապակցվածություններ, որոնք կարող են վերափոխել ոչ միայն ոլորտային քաղաքականությունների մշակումը, այլև ռազմավարական պլանավորման և ապացույցահեն որոշումների կայացման մեխանիզմները [2]:

Արդի պետական կառավարման համակարգերը աստիճանաբար անցում են կատարում թվային կառավարման մոդելների, որտեղ պետական ծառայությունների մատուցումը, քաղաքական որոշումների մշակումը, հանրային հաղորդակցությունը և վարչարարական համակարգումը իրականացվում են ինտեգրված տեղեկատվական և ալգորիթմահեն գործիքների միջոցով: Այս գործընթացները վերափոխում են ոչ միայն պետական կառավարման տեխնիկական կազմակերպումը, այլև թափանցիկության, հաշվետվողականության, հանրային մասնակցության և ինստիտուցիոնալ հաղորդակցության մեխանիզմները:

Սակայն հարկ է նկատել, որ տեխնոլոգիական զարգացումը և թվային կառավարման գործիքների ընդլայնումը միաժամանակ առաջ են բերում նաև նոր մարտահրավերներ, որոնք պայմանավորված են ժողովրդավարական վերահսկողության արդյունավետության, որոշումների կայացման գործընթացում գործադիր իշխանության գերակայության, տվյալների կառավարման և պաշտպանության, ԱԲ ալգորիթմների կիրառմամբ կայացվող որոշումների թափանցիկության, ինչպես նաև պետական համակարգի նկատմամբ հանրային վերահսկողության սահմանների որոշակիացման հետ:

Հետխորհրդային պետությունների համար ԱԲ և տվյալահեն կառավարման դարաշրջանում պետական ինստիտուտների ֆունկցիոնալության որակի ապահովումը առանձնահատուկ մարտահրավեր է՝ պայմանավորված ինստիտուցիոնալ կարողունակության, վարչարարական փորձառության, քաղաքական մշակույթի ժողովրդավարացման և տեխնոլոգիական հարմարվողականության սահմանափակումներով: Ինստիտուցիոնալ կարողունակությունից զատ, գործադիր իշխանության ֆունկցիոնալությունը անմիջականորեն պայմանավորված է նաև քաղաքական գործոններով՝ ներառյալ քաղաքական հարաբերությունների որակը, կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացվածության աստիճանը, խորհրդարանական մեծամասնության և ընդդիմության հարաբերակցության բնույթը,

[2] Joshi, Ankush. "The Evolution of Public Administration in the AI Era." In *Transforming Public Administration Through AI-Driven Predictive Analytics*, 16 pages. IGI Global, 2026.

խորհրդարանական վերահսկողության արդյունավետությունը, ինչպես նաև իշխանության ճյուղերի միջև փոխզսպումների և հակակշիռների իրական գործառնությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, կարող ենք փաստել, որ ժողովրդավարական հետընթացի արդի գլոբալ միտումները ցույց են տալիս, որ պետական կառավարման արդյունավետությունը չի կարող գնահատվել բացառապես տեխնոկրատական կամ մենեջերական արդյունավետության չափանիշներով: Այն ուղղակիորեն պայմանավորված է սահմանադրաիրավական հավասարակշռության պահպանմամբ, խորհրդարանական վերահսկողության արդյունավետությամբ, քաղաքական հաշվետվողականության մակարդակով և պետական կառավարման համակարգի ինստիտուցիոնալ կայունությամբ:

Հենց այս համատեքստում է առանձնահատուկ կարևորություն ստանում գործադիր իշխանության և հանրային կառավարման փոխհարաբերության տեսական ու մեթոդաբանական հստակ տարանջատումը: Արդի քաղաքագիտության տեսություններում այս հասկացությունները փոխկապակցված են, սակայն նույնական չեն: Գործադիր իշխանությունը սահմանադրաիրավական և քաղաքական ինստիտուտ է, որն ապահովում է պետական քաղաքականության ռազմավարական ուղղությունների ձևավորումը որոշակի ժամանակային միջակայքի շրջանակներում, մինչդեռ հանրային կառավարումը ներառում է առավել լայն վարչաինստիտուցիոնալ համակարգ՝ ընդգրկելով քաղաքացիական ծառայությունը, վարչարարական մեխանիզմները, հանրային ծառայությունների մատուցումը, ինչպես նաև ոլորտային քաղաքականությունների իրագործումն ու համակարգումը: Հետևաբար, հանրային կառավարումն ունի ակնհայտ փոխառնչակցություն գործադիր իշխանության հետ, սակայն կառավարման արդյունավետության տեսանկյունից առկա է ոչ միայն վարչարարական, այլև սահմանադրաիրավական, քաղաքական-ինստիտուցիոնալ և ժողովրդավարական չափումների համադրված վերլուծության անհրաժեշտություն:

Վերոնշյալ հիմնահարցերի համապատկերում հատկանշական է, որ Մարինա Մարգարյանն իր թեկնածուական ատենախոսության շրջանակներում, անդրադառնալով հանրային կառավարման համակարգի փոխակերպման փուլերին ժողովրդավարական և արդյունքահեն կառավարման տեսանկյունից, կարևորել է գործադիր իշխանության արդյունավետության համակցված ուսումնասիրության և վերլուծության անհրաժեշտությունը: Այս առումով հեղինակը տարբերակել է արդյունավետության գնահատման ինստիտուցիոնալ, ռազմավարական և օպերացիոնալ մակարդակները: Ատենախոս Մ. Մարգարյանի կողմից այս մոտեցումը հիմնավորվել է գործադիր իշխանության

արդյունավետության ուսումնասիրության ոչ թե մեկ ցուցանիշի կամ մեկ տեսության, այլ բազմաչափ վերլուծական շրջանակ մշակելու անհրաժեշտությամբ: Այս տեսանկյունից ատենախոսական աշխատանքում գործադիր իշխանության՝ նեոինստիտուցիոնալ և համակարգային մոտեցումների սինթեզի հիման վրա տեսամեթոդաբանական շրջանակի մշակումը գիտական նորույթի տեսանկյունից առավելապես գնահատելի է:

Ատենախոսության գիտագործնական առավելություններից է այն, որ հեղինակը համակարգված կերպով անդրադարձել է ՀՀ գործադիր իշխանության փոխակերպման միտումներին՝ վերլուծելով դրա կառուցվածքային, կազմակերպական և գործառութային վերափոխումները հանրային կառավարման արդիականացման համատեքստում: Աշխատանքում փորձ է արվել հստակեցնել գործադիր իշխանության գործառութային շրջանակը՝ այն դիտարկելով քաղաքականությունների մշակման, կառավարման համակարգման, վարչարարական արդյունավետության և հանրային ծառայությունների մատուցման տեսանկյունից: Այս առումով գնահատելի է հեղինակի կողմից ՀՀ գործադիր իշխանության զարգացման և վերափոխման շարժընթացի համակողմանի ներկայացումը 2000-2024 թթ. ընթացքում:

Ներկայացված ատենախոսությունը համապարփակ, տրամաբանորեն հիմնավորված տեսական, մեթոդաբանական և կիրառական ուսումնասիրություն է: Ատենախոսության էմպիրիկ հիմքը կազմված է հեղինակի սեփական քաղաքագիտական հետազոտությունից, ինչպես նաև երկրորդային տվյալների վերլուծությունից: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից և ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հոդվածներում:

Կարևորելով թեկնածուական ատենախոսության հիմնադրույթներն ու եզրակացությունները՝ ստորև ներկայացնում եմ հետևյալ դիտարկումները:

1. Անշուշտ, գնահատելի է հեղինակի կողմից գործադիր իշխանության արդյունավետության գնահատման ինստիտուցիոնալ, ռազմավարական և օպերացիոնալ մակարդակների տարբերակումը, ինչպես նաև համապարփակ տեսամեթոդաբանական շրջանակ ձևավորելու փորձը, ինչը հնարավորություն է ստեղծում խնդրի բազմաշերտ վերլուծության համար: Այնուամենայնիվ, ատենախոսության շրջանակներում նկատվում է գործադիր իշխանության և հանրային կառավարման հասկացությունների

որոշակի նույնականացման միտում: Մինչդեռ քաղաքական գիտության և հանրային կառավարման արդի տեսություններում այս հասկացությունները փոխկապակցված են, սակայն ոչ նույնական: Ցանկալի կլիներ ատենախոսական աշխատանքում հստակ արտացոլված լինեին հանրային կառավարում և գործադիր իշխանություն հասկացությունների հստակ տարբերակումը, ինչպես նաև վերլուծության ենթարկվեր դրանց փոխգործակցությունը կառավարման («Governance»), սահմանադրաիրավական կառուցվածքի և քաղաքական համակարգի գործառնական տրամաբանության տեսանկյուններից:

2. Գործադիր իշխանության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն վարչարարական և կազմակերպական գործոններով, այլև տվյալ պետության սահմանադրաիրավական կարգավիճակով և քաղաքական համակարգի առանձնահատկություններով: Այս տեսանկյունից առանցքային նշանակություն ունի, թե կառավարման ինչպիսի մոդելի շրջանակներում է ձևավորվում գործադիր իշխանությունը՝ նախագահական, կիսանախագահական, թե խորհրդարանական, ինչպես նաև իշխանությունների բաժանման, փոխզսպումների և փոխկախվածությունների ինչպիսի մեխանիզմներ են սահմանված սահմանադրաիրավական ակտերում: Այս առումով ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը գործադիր իշխանության արդյունավետության չափումը դիտարկեր ոչ միայն ինստիտուցիոնալ, ռազմավարական և օպերացիոնալ մակարդակներում, այլև քաղաքական համակարգի որակի հետ փոխկապակցվածության տեսանկյունից: Մասնավորապես՝ անհրաժեշտ էր հաշվի առնել ՀՀ սահմանադրաիրավական փոխակերպումների, խորհրդարանական կառավարման մոդելի կայացման, կուսակցական համակարգի զարգացման, խորհրդարանական վերահսկողության և քաղաքական հաշվետվողականության գործոնների ազդեցությունը գործադիր իշխանության գործառնության որակի ապահովման տեսանկյունից: Այսպիսի համադրված մոտեցումը կարող էր ապահովել գործադիր իշխանության արդյունավետության առավել ամբողջական և գիտականորեն հիմնավորված վերլուծություն:

3. Միաժամանակ, գործադիր իշխանության արդյունավետության վրա էական ազդեցություն ունի խորհրդրանական մշակույթի ժողովրդավարացման որակը, մասնավորապես՝ խորհրդարանական վերահսկողության արդյունավետությունը, խորհրդարանական ընդդիմության կարողունակությունը, քաղաքական հաշվետվողականության մակարդակը,

ինչպես նաև գործադիր իշխանության և խորհրդարանական մեծամասնության հարաբերակցության բնույթը: Խորհրդարանական վերահսկողությունը քաղաքական մշակույթի ժողովրդարացման տեսանկյունից ունի առանցքային նշանակություն: Կառավարության գործունեության որակը, ինչպես նաև հանրային քաղաքականության հասցեականությունը առավելապես պայմանավորված են օրենսդիր-գործադիր իշխանության ճյուղերի փոխզսպման մոդելների փաստացի գործարկմամբ: Ներկայումս, ՀՀ-ում խորհրդարանի գործառութային արդյունավետության ուսումնասիրությունը օրենսիր-գործադիր ճյուղերի փոխզսպման և հակակշռման տեսանկյունից ցույց է տալիս, որ փաստացի գործ ունենք խորհրդարանի նկատմամբ գործադիր իշխանության գերիշխող դիրքի հետ, ինչը ոչ միայն անընդունելի է իշխանության ճյուղերի տարանջատման և ինքնուրույնության տեսանկյունից, այլև՝ հակասում է խորհրդարանական կառավարման սկզբունքներին: Այս համատեքստում կարևոր ուսումնասիրության առարկա կարող էին դառնալ նաև խորհրդարանական խմբակցությունների գործունեության մեխանիզմները, ընդդիմադիր խմբակցությունների լիազորությունների շրջանակը և ազդեցությունը, նախարարական պաշտոնների բաշխման քաղաքական տրամաբանությունը, պաշտոնյաների քաղաքական և ապաքաղաքական կարգավիճակի հարաբերակցությունը, ինչպես նաև պետական կառավարման համակարգի կուսակցականացման աստիճանը:

4. Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը առավել խորքային վերլուծության ենթարկեր ՀՀ սահմանադրաիրավական և ինստիտուցիոնալ փոխակերպումների պայմաններում գործադիր իշխանության վերափոխման փուլերը և դրա փոխգործակցությունը խորհրդարանի հետ: Թեև ատենախոսության 97-101-րդ էջերում հեղինակը անդրադառնում է գործադիր իշխանության արդյունավետության վրա ազդող մի շարք գործոնների՝ ներառյալ կառավարման ձևին, պետության տարածքային կառուցվածքին և վարչակարգի պահպանման խնդիրներին, այնուամենայնիվ, սահմանադրաիրավական և քաղաքական գործոնների ազդեցությունը բավարար չափով համակարգված և խորքային ուսումնասիրության չի ենթարկվում: Մասնավորապես, 101-րդ էջում աղյուսակային ձևաչափով ներկայացվում են գործադիր իշխանության արդյունավետության չափանիշները՝ դրանք պայմանավորելով խորհրդարանի կողմից ընդունված կառավարության օրինագծերի թվի, բյուջետային ճշգրտումների և այլ ցուցիչների հետ, սակայն ներկայացված

չափանիշները չեն ուղեկցվում համեմատական վիճակագրական տվյալներով, ոլորտային համեմատական տարանջատմամբ և դինամիկ վերլուծությամբ: Արդյունքում արդյունավետության գնահատման շրջանակը մասամբ պահպանվում է տեսական և նկարագրական մակարդակում՝ առանց բավարար էմպիրիկ խորության:

5. Ատենախոսության 156-157-րդ էջերում հեղինակն անդրադառնում է տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների ազդեցությամբ պետական ծառայությունների թվայնացման գործընթացներին, սակայն թվային հարթակների գործառնական արդյունավետությունը, պետություն–հասարակություն հետադարձ կապի որակը և հանրային մասնակցության մեխանիզմները բավարար չափով վերլուծության չեն ենթարկվում: Այս համատեքստում առավել խորքային ուսումնասիրության առարկա կարող էին դառնալ սոցիալական աջակցության ոլորտում ներդրված թվային համակարգերը, մասնավորապես՝ անձի ֆունկցիոնալության գնահատման և ընտանիքի անապահովության գնահատման նոր մեխանիզմները, որոնք էականորեն վերափոխել են սոցիալական քաղաքականության իրականացման տրամաբանությունը և պետական ծառայությունների հասցեականության մեխանիզմները: Նշյալ հարթակների գործառնական վերլուծությունը հնարավորություն կտար գնահատելու ոչ միայն գործադիր իշխանության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության արդյունավետությունն ու ներառականությունը, այլև հանրային կառավարման համակարգի թափանցիկության, հաշվետվողականության և հանրային վստահության վերականգնման գործընթացները, հատկապես այն ոլորտներում, որտեղ նախկինում առկա են եղել բարձր կոռուպցիոն ռիսկեր և հանրային վստահության ճգնաժամ:

6. Միաժամանակ, թվային մասնակցության տեսանկյունից օգտակար կլիներ իրավական ակտերի, նախագծերի հրապարակման միասնական («e-draft») հարթակի գործունեության վիճակագրական և բովանդակային վերլուծությունը՝ ներկայացված առաջարկությունների քննարկման, ինտեգրման և հանրային մասնակցության արդյունավետության գնահատման համատեքստում: Նման ուսումնասիրությունը կարող էր առավել գործնական և կիրառական հիմք ապահովել հեղինակի կողմից ներկայացվող առաջարկությունների համար՝ թվային հանրային կառավարման գործիքների հետագա կատարելագործման տեսանկյունից:

Ամփոփելով վերոհիշյալ մոտեցումներն ու նկատառումները՝ վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Մարինա Ալեքսանդրի Մարգարյանի

«Գործադիր իշխանության գործառման փոխակերպումը ՀՀ քաղաքական համակարգում» («Transformation of the Functioning of the Executive Power in the Political System of the Republic of Armenia») թեմայով՝ ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Քաղաքական գիտությունների թեկնածու Մագդա Արսենյան

Պաշտոնական ընդդիմախոս, ք.գ.թ. Մագդա Արսենյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Վ. Հովհաննիսյան

12.05.2026 թ.